# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար կենցաղային, տնտեսական ապրանքների, տնտեսող լամպերի և ավտոմեքենաների անիվների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/17» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի հոկտեմբերի 15-ին կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-14» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2025 թվականի հոկտեմբերի 29-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.15 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 15.10.2025թ. N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-14» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«29» «10» 2025թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և Արպանիվ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Խանդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 15.10.2025թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-14» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրի 35-րդ չափաբաժնով նախատեսված ավտոմեքենաների անիվների մասով 85 479.60 (ութսունհինգ հազար չորս հարյուր յոթանասունինը ՀՀ դրամ վաթսուն ՀՀ լումա) ՀՀ դրամ, 36-րդ չափաբաժնով նախատեսված ավտոմեքենաների անիվների մասով 134 919.60 (մեկ հարյուր երեսունչորս հազար ինը հարյուր տասնինը ՀՀ դրամ վաթսուն ՀՀ լումա) ՀՀ դրամ, 37-րդ չափաբաժնով նախատեսված ավտոմեքենաների անիվների մասով 98 919.60 (իննսունութ հազար ինը հարյուր տասնինը ՀՀ դրամ վաթսուն ՀՀ լումա) ՀՀ դրամ ֆինանսական միջոցների առկայությունը և ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը՝

1.1. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ***Դատական դեպարտամենտ*** | ***Արպանիվ ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1 | Հասցե՝ ք. Երևան, Նար-Դոս 122 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 09209297 |
| Հ/Հ՝ 900011192151 | Հ/Հ՝ 2050022326481001 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Ղեկավար՝ Ն. Գալստյան | Տնօրեն՝ Ա. Խանդանյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |

**Հավելված N 1**
**« 29 » « 10 » 2025թ. կնքված N 1 համաձայնագրի**

*(Հավելված N 3*
*« 15 » « 10 » 2025թ. կնքված*
*N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-14» ծածկագրով պայմանագրի)*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Ապրանքի | | | | | |
|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | |
| | | | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 35 | 34351200/502 | Ավտոմեքենաների անիվներ | 85 479.60 | 85 479.60 | **85 479.60** |
| 36 | 34351200/503 | Ավտոմեքենաների անիվներ | 134 919.60 | 134 919.60 | **134 919.60** |
| 37 | 34351200/504 | Ավտոմեքենաների անիվներ | 98 919.60 | 98 919.60 | **98 919.60** |

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
***Արպանիվ ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Նար-Դոս 122
ՀՎՀՀ՝ 09209297
Հ/Հ՝ 2050022326481001
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ա. Խանդանյան

/ստորագրություն/
Կ.Տ.